32-ՐԴ ՆԻՍՏ

5 նոյեմբերի 1918թ.

Նախագահում է *Գր. Տեր-Խաչատրյանը.* մինիստրներից ներկա են՝ նախագահ, արտաքին գործոց և խնամատարության:

Նախագահը կարդում է օրակարգը.

1. Օրինագիծ պետական հիմնարկությունների ծառայողներին միանվագ նպաստ տալու մասին (վերջնական հաստատում).
2. Վրաստանի Հ. Ազգային խորհրդին նպաստ տալու մասին.
3. Գաղթականների վերադարձի խնդիրը.
4. Օրինագիծ արդյունաբերական հիմնական և լրացուցիչ տուրքերի ավելացման մասին (Ա ընթերցում).
5. Մանդատային հանձնաժողովի զեկուցումը.
6. Օրինագիծ Հայաստանի Խորհրդարանի նախահաշվի մասին (Ա ընթերցում).
7. Պառլամենտական հանձնաժողովների լրացումների խնդիրը.
8. Դաշնակցական ֆրակցիայի հարցումը.
9. Ընթացիկ գործեր:

Ա. և Բ. կետերը կարդացվում և հաստատվում են:

Մանդատային հանձնաժողովի զեկուցումը հաստատվում է խորհրդարանի կողմից:

Հ. Ազատյան - Անցյալ անգամին ասացի, որ Մահմեդ Ալի փաշան մի պաշտոնական թուղթ է տվել մեր կառավարությանը, ըստ որի տաճիկ զորքը պիտի քաշվի մեր երկրից վեց շաբաթից հետո և միաժամանակ խնդրել է, որ Հայաստանի կառավարությունը հնարավորություն տա այդ զորքերին անցնելու: Մեր կառավարությունը պատասխանել է, որ կկատարի այդ խնդիրը: Մենք մեր կառավարության պատասխանը անբավարար ենք համարում, քանի որ քաղաքական դրությունն այժմ բոլորովին այլ է, քան մի քանի ամիս առաջ՝ երբ ստիպված էինք տաճիկների բոլոր պահանջները կատարել: Մենք այժմ պիտի պահանջենք, որ տաճիկ կառավարությունն անմիջապես դուրս բերի իր զորքերը մեր երկրից և թալանի չենթարկի մեր երկրի հարստությունը: Եթե հնարավոր չի զորքերի անմիջական հեռացումը, այն դեպքում թող մեր գաղթականությունը գնա ու տեղավորվի, իսկ զորքը շարունակի իր էվակուացիան:

Մենք վախենում ենք, որ տաճիկ կառավարությունը յուր խոստումները չկատարի և հանգամանքները փոփոխվելով, իսկի չհեռանա մեր երկրից: Կտրուկ պիտի լինի մեր պահանջը, մանավանդ այժմ, երբ Ռուսաստանն էլ պատերազմ է

հայտարարել Տաճկաստանին, որի հետևանքով վերացած պիտի համարել Բրեստի և ապա՝ Բաթումի դաշնագրությունները:

Ս. Վրացյան - Գաղթականական հարցը հին է և բոլորիս ծանոթ, սակայն նա երբեք այնպես սուր կերպով չի դրվել մեր առաջ, ինչպես այժմ, մանավանդ այժմ, երբ 150 000 գաղթականություն հավաքված սահմանամերձ շրջանները, վայրկյան առ վայրկյան սպասում է տաճիկ զորքի հեռանալուն:

Եթե մենք՝ կառավարությունը, չմտածենք, չաշխատենք շուտ տեղավորել նրան ու հոգ տանել, այն ժամանակ նա գարնան ծյան պես կհալչի, կերթա: Սակայն առանց ժողովրդի չի կարող պետություն կազմվել: Տաճիկ կառավարությունը ունի մի նպատակ և յուր քաղաքականությունը հարմարեցնում է նրան՝ մի տեղ գազանաբար սրախողխող անել և ուրիշ տեղում խաղաղ միջոցներով կոտորել: Հայը այժմ, ավելի քան երբեք, պարտական է բողոքել ու պահանջներ դնել տաճիկ կառավարության վերաբերմամբ: Կացությունն անհանդուրժելի է, այդ իսկ պատճառով Հայաստանի կառավարությունը իր դիմումներն ու պահանջները ամենաեռանդուն ձևով պիտի անե, կրկնե, որ ժողովուրդն անպայման վերադառնա իր տեղը ամենակարճ միջոցում: Այժմ դրությունն այնպես է, որ տաճիկ կառավարությունն առանց տրտունջի կկատարե Անգլիայի և մյուս դաշնակիցների պահանջները, այդ պատճառով պիտի դիմել և այդ պետությանց ներկայացուցիչներին: Խորհրդարանը պիտի օգնե կառավարությանը՝ ընտրելով պառլամենտական մի հանձնախումբ, որ մտնի գաղթականության մեջ գործի և ոչ թե ճառերով ու հարցապնդումներով պարապի, որի արդյունքը դարձյալ խոսքը պիտի մնա: Կառավարությունը պիտի շատ արագ ընթացք տա մինչև այժմ մշակված օրենքներին և կիրառի կյանքի մեջ, ինչպես օրինակ որբերի մասին եղած օրենքը: Աստիճանաբար դատարկվող շրջաններն անմիջապես պիտի լցնեն գաղթականները՝ տվյալ շրջանի պատրաստի ադմինիստրացիայի աջակցությամբ: Մեր աշխատությամբ գաղթականության վիճակն արմատապես չի կարող բարելավվել, քանի որ դա արդյունք է օբյեկտիվ պայմանների. մինչև որ այդ պայմանները չվերանան, արմատապես չի կարող բարելավվել նրա դրությունը, միայն մեր աշխատությունն ու ջանքերը որոշ չափով կարող են թեթևացնել նրա վիճակը:

Մինիստր նախագահ - Կառավարությունը շատ լավ հասկանում է ճառախոսների զայրույթը, բողոքը և պիտի ասել, որ բաժանում է այն. կառավարությունը հասկանում է գաղթ. ծանր վիճակը, կառավարությունը հասկանում է և այն, որ անհրաժեշտ է շտապեցնել գաղթ[ականության] վերադարձը: Մեր աշխատանքի մեծագույն մասը միչև օրս նվիրված է եղել գաղթականական գործին: Սխալ է Ազատյանի այն հայտարարությունը՝ [թե թուրքական] զորքը անխոչընդոտ անցկացնելու համար երկաթուղային և հեռագր[ական] հնարավորություններ տալ[ը] մենք ընդունել ենք լուռ ու մունջ: Մենք պատճառաբանել ու բողոքել ենք ոչ միայն Թիֆլիս, այլև Պոլիս. թալանի համար նույնպես բողոքել ենք և պիտի ասել, որ մեր բողոքը արդյունք է տվել: Միան երեկ մենք իմացանք Պոլսի դրությունը, հենց երեկ էլ մենք դիմեցինք ու խնդրեցինք, որ 8-10 օրում զորքը քաշեն. մենք հաղորդակցության միջոցներ չունենք մինչև օրս և մեր դիմումները դեռ պիտի անցնեն որևէ ցաշտաբա*-ով:

Ա. Խոնդկարյան - Գաղթականության խնդիրը արտաքին քաղաքականության խնդիր է և քննվել է կառավարության նիստերում: Շատ ուրախ կլինեի եթե Վրացյանի կարծիքը լիներ ամբողջ ֆրակցիայինը, որովհետև, երբ մինչև այժմ մենք համեմատաբար մեղմ ձևով խոսում էինք Բաքվի աղետների մասին, մեզ, կարծես թե, հանդիմանում էր Քաջազնունին, հայտարարելով, որ Բաքվում վնասվողների թիվը ոչ թե 30 հազար է, այլ՝ 5 հազար: Սխալ է եղել դաշնակցության վերջին մի քանի ամիսների արտաքին քաղաքականությունը, որը, սակայն, շարունակվում է և այժմ: Ճիշտ է, մինիստրները փոխվել են, սակայն Տիգրանյանը նույն սխալ քաղաքականության պաշտպան է: Հայաստանի Հանրապետությունը օբյեկտիվ

* Վարչապետը նշելով ուղեկալ, նկատի ունի սահման: Ծանոթ. կազմ.:

պայմանների, արտաքին ուժերի բախման արդյունք է. մինչդեռ դաշնակցականները ընդունելով, որ իրենց վարած քաղաքականության արդյունքն է, միշտ պաշտպանել են այն միտքը, թե չպիտի տհաճություն պատճառել տաճիկներին, թե՛ խոսքով և թե՛ գործով: Տաճիկ կառավարության վերաբերմամբ մի բանի համար չպիտի խնդրել մի քանի անգամ, խնդիրը չկատարվելուց հետո պիտի փոխել տոնը, խնդիրը պիտի շուռ տալ պահանջի: Մեր փրկության միջոցը այն է, որ կառավարությունը փոխի իր քաղաքականությունը: Պիտի ետ կանչել նույնպես և Պոլսի մեր ներկայացուցիչներին, որոնք իրենց ճառերով Սուլթանին են ներբողում ու փառաբանում: Նույն հիշյալ քաղաքականության հետևանք է և այն, որ մեր կառավարությունը, ի դեմս յուր ներկայացուցիչների, մերժում է Ռուսաստանի 20 միլ. ռուբլի նպաստը հօգուտ գաղթականության:

Մինիստր-նախագահ - Խոնդկարյանի հայտարարությունը 20 միլ. վերաբերմամբ չի համապատասխանում իրականության և նա առանց ստուգելու փաստը անում է նման հայտարարություն: Բաքվի դեպքերի առթիվ ասել եմ՝ վնասվածների թիվը 5 հազար է և ոչ 30 հազար, ոչ թե նրա համար, որ աղետը փոքրացնեմ, այլ այն պատճառով, որ այն աղբյուրը, որ առաջ հայտնել էր թե վնասվողների թիվը 30 հազար է, նույն այդ աղբյուրը վերջերս հայտնում է թե 5 հազար է, այնպես որ իմ հայտարարությունը եղել է լոկ մի փաստական ուղղում: Մեր արտաքին քաղաքականությունը վաղն էլ նույն է լինելու, ինչ որ երեկ էր. մենք չենք ուզում, որ հայ ժողովուրդը արկածի մեջ ընկնի, մենք դրության փոփոխություն չենք գտնում:

Ա. Խոնդկարյան - Բացատրում է, որ 20 միլիոնի մասին իրեն տեղեկացրել է տեղյակ անձնավորություն՝ Ա. Զոհրաբյանը և ավելացնում, որ իրավունք չունի նրան չհավատալու:

Ա. Մելիքյան - Քննադատում է կառավարության արտաքին քաղաքականությունը և հիշեցնում, որ երբ երեք ամիս առաջ ինքը և պատգամավոր Մամիկոնյանն առաջարկում էին լինել խիզախ ու համարձակ, Քաջազնունին ասում էր, պիտի զգույշ լինել: Տաճիկ կառավարությունը ձգձգում է զորքի հեռացնելը մեր տերիտորիայից մեկ այն պատճառով, որ մեր երկրի բարիքներն ամբողջովին կարողանա թալանի տալ, մեկ էլ այն, որ սպասում է թե մի գուցե հանգամանքները փոխվեն այնպես, որ էլ հարկ չլինի մեր երկիրը դատարկելու: Ես չեմ կարող չկասկածել, որ անգլո-ֆրանսիական կոալիցիան մատների արանքով է նայում տաճիկ զորքի Կովկասը դատարկելու խնդրի վրա. հնարավոր է նույնիսկ, որ այդ կոալիցիան նոր կոմբինացիաների մեջ մտնի տաճիկ կառավարության հետ, որից մենք չօգտվենք: Արտաքին քաղաքականությունը մեզանում տարվել է գաղտնի դիպլոմատիկական ճանապարհով և այդ բանը մեզ կասկածների մեջ է ձգում մեր կառավարության նկատմամբ, այսինքն մտածում եմ, թե չլինի՞ մեր կառավարությունը գաղտնի կապեր ունի տաճիկ կառավարության հետ, որպիսի հանգամանքը իրավունք է տալիս վերջինիս մեր երկրից դուրս չգալու: Մեզ այժմ երկու ճանապարհ է մնում, մեկը՝ դաշնակիցներին դիմումներ անելու, մյուսը՝ պահանջ դնելու ու բացասական պատասխանի դեպքում, ուժով ետ քշել: Արտաքին գործերի մինիստրությունը չէր էլ կարող անել այն, ինչ որ անհրաժեշտ էր, որովհետև կտրված արտաքին աշխարհից, մեր կեղևի մեջ պարփակված էինք: Տաճկաստանի վերաբերմամբ պիտի լեզու բանեցնել, որ նա անմիջապես քաշի իր զորքերը: Մյուս կողմից, մեր կառավարությունը պիտի դիմի Ռուսաստանին, այն Ռուսաստանին, որ վերջերս քանդելով Բրեստի դաշնագիրը՝ պատերազմ հայտարարեց Տաճկաստանին: Պիտի փորձեր անել ռուսաց կառավարության հետ դաշնակից լինելու: Պիտի օգտվել անցյալի փորձերից և գիտենալ, թե ո՞վ կարող է բարեկամ լինել և ով՝ թշնամի:

Ս. Մամիկոնյան - Մեր կառավարությունը սրբությամբ կատարել է Բաքումի դաշնագրի պայմանները, սակայն նրա մեղքը նրանում է, որ չի պահանջել նույնը և տաճիկներից: Պիտի կատարել երկիր գնալու ցանկություն ունեցող ժողովրդի կամքը. դիմել տաճիկ կառավարության այստեղի ներկայացուցչին և հայտնել, որ մենք ուժ չունենք տարերային ուժի առաջն առնելու, ուստի մեր ունեցած կամ

հավաքած զորքը դնում ենք նրա՝ գաղթականության հետ. պիտի պահանջել, որ տաճիկները բացի իրենց հետ բերած ռազմամթերքը, ոչինչ տանելու իրավունք չունենան: Պետք է մեր ժողովրդի օրհասական վիճակը ներկայացնել անգլո-ֆրանսիական ներկայացուցիչներին Թիֆլիսում, որ նրանք էլ հայտնեն Պոլսի ներկայացուցիչներին: Վերջինները պիտի ազդեն, ստիպեն Տաճկաստանին, համաձայն միջազգային օրենքի, ետ քաշելու մեր երկրից իրենց զորքը և չտանելու մեր հարստությունները: Պիտի օր առաջ գաղթականությունը գնա իր տեղը՝ առաջուց կազմակերպված ունենալով յուրաքանչյուր տեղի ադմինիստրացիան, կարգ ու կանոն պաշտպանելու նպատակով: Առաջարկում եմ կազմել պառլամենտական մի կոմիսիա, որ արտաքին գործոց մինիստրի հետ հսկեն և ընթացք տան այս որոշմանը: Ես կուզենայի, որ գոնե այդ խնդրի շուրջը լիներ ընդհանուր համաձայնություն: Պիտի այդ գործը շտապեցնել:

Եր. Հարությունյան - Տաճիկների զորքը չհեռացնելը ունի քաղաքական նպատակներ և վեր է լուծում այդ քաղաքականությունը: Մեր հին կառավարության քաղաքականությունը եղել է անբավարար, սակայն նպատակահարմար: Առաջարկում եմ կազմակերպել ինֆորմացիոն մասը և դիմել դաշնակիցներին, որ նրանք մտնեն մեր ժողովրդի դրության մեջ և անհրաժեշտ ազդումներով հեռացնել տան տաճիկ զորքը մեր տերիտորիայից:

Ս. Վրացյան - Բացատրում է, որ Ռուսաստանի ներկայացուցիչը Բեռլինում՝ Իոֆեն ոչ թե 20 միլ. ռ., այլ 20 հազար է առաջարկել մեր ներկայացուցիչներին հօգուտ գաղթականության և այդ գումարը ստացվել է մերոնց կողմից մեծ շնորհակալությամբ: 20 միլ. ռ. հարցը արդյունք է սովորական մի թյուրիմացության:

Ն. Աղբալյան - Շատ հոխորտալի տոն է նկատվում ֆրակցիաների կողմից, սակայն այդ տոնը չի համապատասխանում մեր դրության, մեր վիճակին: Համաշխարհային պատերազմի ընթացքում Գերմանիայի հաստատուն վիճակը թելադրում էր նրան հոխորտալի տոն ունենալ, սակայն վերջին ամիսներին, ինչպես տեսնում ենք, փոխվել է տոնը, որովհետև դրության երերումն է տեղի ունեցել: Մեզ մոտ դրության և տոնի կապը այդպիսի հարաբերական կապի մեջ չի դրվում: Բաթումում դաշն կապելու միջոցին մեր դրությունը թույլ չէր տալիս հոխորտական տոն ունենալ, այժմ էլ նույնը պիտի լինի մեր տոնը, քանի որ հիմիկվա և այն ժամանակվա դրության մեջ փոփոխություն չկա-մեր ուժերը նույն են. ուստի դիմենք մեր դաշնակից պետություններին և խնդրենք, որ նրանք՝ հենված իրենց հաղթական ուժին ու բազկին, ազատեն մեր բազմաչարչար ժողովուրդը այս անել վիճակից:

Մինիստր-նախագահ - Հայտարարում եմ, որ արդեն դիմումներ եղել են պետություններին: Ինչ վերաբերում է պատգ. Մամիկոնյանի առաջարկին, որ պիտի կազմել մի կոմիսիա՝ արտաքին գործերի մինիստրի հետ աշխատելու, կառավարությունը շատ ուրախ է դրա համար, քանի որ նրա ցանկությունն էլ այդ է:

Առաջարկվում են բանաձևեր, որոնցից անցնում է դաշն. ֆրակցիայինը, որը հետևյալն է.

Լսելով գաղթականների վիճակի մասին եղած վիճաբանությունները՝ Հայաստանի Խորհրդարանը որոշում է.

1. Հանձնարարել կառավարությանը՝ եռանդուն բողոք ներկայացնել տաճիկ կառավարությանը՝ գաղթականների վերադարձը արագացնելու պատճառով:

2. Այս բողոքի մասին տեղեկացնել նաև մեծ պետությունների ներկայացուցիչներին:

3. Տաճիկների կողմից պարպվելիք գավառների համար կազմել վարչություն, որը կօժանդակե գաղթականների վերադարձին և գաղթականների հետ կմտնե երկիր:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 11-ին:

«Զանգ», 14 և 17 նոյեմբեր, 1918թ.